Արձանագրություն N 3

«ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«17» «հոկտեմբեր» 2018թ.

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան, Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան
Բացակայում էին՝

1. **«ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին**

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի և 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց. N 7, 23 չափաբաժինների մասով ընտված մասնակից ճանաչել «Թեոֆարմա» ՍՊ ընկերությանը:

1.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- ՀՀ ՊԵԿ-ից ստացված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության համաձայն «Ֆարմ Թրաստ» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող՝ 24,660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է թույլատրելի առավելագույն շեմը՝ 11-րդ չափաբաժնի մասով՝ 813,6 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 4,350 ՀՀ դրամ: Ինչպես նաև, վերը նշված չափաբաժինների մասով ապրանքի ամբողջական նկարագրի մեջ առկա չէ պիտանելիության ժամկետը և պահպանման պայմանները:
- «Արմֆարմացիա» ՓԲ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ առկա չէ /1-ին, 21-րդ, 25-րդ/ չափաբաժինների ազդող նյութը, պիտանելիության ժամկետները, պահպանման պայմանները:
- «Եվրոֆարմ» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ առկա չէ /2-րդ, 10-րդ, 22-րդ/ չափաբաժինների ազդող նյութը, պիտանելիության ժամկետները, պահպանման պայմանները:
- «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ առկա չէ /3-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 24-րդ, 29-րդ, 31-րդ, 32-րդ /չափաբաժինների պիտանելիության ժամկետները, պահպանման պայմանները, 15-րդ չափաբաժնի մասով նաև հստակ փաթեթավորումը: Բացակայում է՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը /Հավելված 2/:

1.3. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցել վերոհիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Անգործության ժամկետը լրանալուց հետո գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Թեոֆարմա» ՍՊ ընկերության հետ կկնքվի գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան